

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2019թ. II եռամսյակում ԱՀ արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության գործունեության վերաբերյալ

2019թ. II եռամսյակում իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից որոշակի աշխատանք է կատարվել համակարգին վերապահված խնդիրների իրականացման ուղղությամբ:

Այսպես, հաշվետու ժամանակահատվածում պետական գրանցման են ենթարկվել 66 առևտրային և 12 ոչ առևտրային տիպի իրավաբանական անձ, 127-ի հիմնադիր փաստաթղթերի փոփոխությունները սահմանված կարգով գրանցվել են (ստացել են ընթացիկ գրանցում), իսկ 6-ի գործունեությունը՝ դադարեցվել:

1 իրավաբանական անձի առանձնացված ստորաբաժանում վերցվել է պետական հաշվառման:

5 հիմնարկ ենթարկվել են ընթացիկ պետական հաշվառման:

Պետական հաշվառման են ենթարկվել նաև 281 անհատ ձեռնարկատեր, 57-ը՝ ենթարկվել ընթացիկ պետական հաշվառման, իսկ 26-ի գործունեությունը՝ դադարեցվել:

Տրամադրվել են 24 սուբյեկտի վերաբերյալ ամբողջական տեղեկություններ:

Ըստ գրասենյակների գրանցման գործընթացի իրավիճակը բնութագրվում է հետևյալ կերպ.

անվանում	իրավաբանական անձ			իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանում և հիմնարկ			անհատ ձեռնարկատեր			Ամբողջական տեղեկությունների տրամադրում	ընդամենը	պետ. տուրք (հազ. դրամ)
	սկզբ.	ընթ.	Լուծ/դադ	սկզբ.	ընթ.	Լուծ/դադ	սկզբ.	ընթ.	գործ. դադար			
<i>Կենտրոնական մարմին</i>	12	10								1	23	170
<i>Ստեփանակերտ</i>	52	95	5	1	1		111	36	24	18	343	1856
<i>Ասկերան</i>	4	6			2		22	4			38	185
<i>Հաղբուֆ</i>	5	3			1		16	2			27	158
<i>Մարտակերտ</i>	1	5					50	2	1	1	60	199
<i>Մարտունի</i>		3	1		1		47	9		2	63	177,5
<i>Շուշի</i>	2	2					16	2		2	24	97
<i>Քաշաթաղ</i>	2	3					19	2	1		27	112
Ընդամենը	78	127	6	1	5		281	57	26	24	605	2954,5

Պետական միասնական գրանցամատյանից տրվել է 187 (183/4) տեղեկանք:

Տրամադրվել են իրավաբանական անձանց 2 կանոնադրությունների պատճեններ:

Վերը նշված գրանցումների դիմաց գանձվել է 3 143 500 դրամ պետական տուրք:

Գործակալության կողմից մատուցած վճարովի ծառայությունների արդյունքում II եռամսյակում արտաբյուջե է մտցվել 765 000 դրամ:

ԱՀ Նախագահի ծրագրից բխող միջոցառումների կատարման շրջանակներում իրականացվել են նախկինում գրանցված (հաշվառված) 22 սուբյեկտների վերաբերյալ ամբողջական տեղեկությունների՝ էլեկտրոնային եղանակով e-register.am կայքում տեղադրման աշխատանքներ:

Կազմակերպվել են նաև քաղաքացիների ընդունելություններ, նրանց բազմաթիվ հարցերին տրվել ապառիչ պատասխաններ:

Գործակալության կենտրոնական մարմնի կողմից սիստեմատիկ հսկողություն է իրականացվել գործակալության կառուցվածքային ստորաբաժանման նկատմամբ, տրվել ոլորտը կարգավորող օրենսդրության պարզաբանումներ և մեթոդական ցուցումներ:

Գործակալության պետ
Կատարող՝ Բ. Առստամյան

Գ. Մարսիմովա